Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

04.03.2022թ. ք. Երևան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության /այսուհետ՝ Ծառայություն/ Երևան քաղաքի Ավան, Նոր Նորք և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության ավագ լեյտենանտ՝ Արմենուհի Մելքոնյանս ուսումնասիրելով թիվ 06227662 կատարողական վարույթի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 27.05.2020թ. տրված թիվ ԵԴ/30640/02/19 կատարողական թերթի համաձայն պետք է Էլիզա Ալբերտի Սահակյանից «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի օգտին բռնագանձել 305.729 ՀՀ դրամ և վճռով հաշվարկվող տոկոսները:

Պարտապանից բռնագանձել նաև բռնագանձման ենթակա գումարի 5%-ը, որպես կատարողական գործողությունների կատարման ծախսի գումար:

Ձեռնարկված կատարողական գործողությունների կատարման ընթացքում պարզվել է, որ պարտապանի անվամբ Ծառայությունում առկա են հարուցված բռնագանձման բնույթի այլ կատարողական վարույթներ: Կատարողական վարույթով բռնագանձման վերաբերյալ վճռի կատարման ընթացքում պարտապան Էլիզա Ալբերտի Սահակյանի ողջ գույքի նկատմամբ բռնագանձում տարածելու պարագայում պարզվել է, որ այդ գույքը օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի և ավել չափով բավարար չէ պահանջատիրոջ հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար և պարտապանին պատկանող այլ գույք և դրամական միջոցներ չեն հայտնաբերվել, որոնց վրա կարելի է բռնագանձում տարածել:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28.1, 28 հոդվածներով և 37-րդ հոդվածի 8-րդ կետով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Կասեցնել թիվ 06227662 կատարողական վարույթը 90-օրյա ժամկետով:

Առաջարկել պահանջատիրոջը և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ 90-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան:

Սույն որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել www.azdarar.am ինտերնետային կայքում:

Որոշման պատճենն ուղարկել կողմերին.

Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

Ավագ հարկադիր կատարող,

Արդարադատության ավագ լեյտենանտ Ա.Մելքոնյան

Digitally signed by
MELKONYAN
ARMENUHI
2010950313
Date: 2022.03.07
11:36:09 AMT